ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 13 - Ն

2018Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ ավագանու հաստատմանը ներկայացվեց Դդմաշեն համայնքի 2018թ. տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Համայնքի վարչական բյուջեի սոցիալական պաշտպանության ծախսերի նախահաշվի /խումբ 10.3.1/ հուղարկավորության նպաստների 4726 հոդվածից պակասեցնել 500.0 հազար դրամ, և այն հաստատել 0 դրամ:

2/ Համայնքի վարչական բյուջեի սոցիալական պաշտպանության ծախսերի նախահաշվի /խումբ 10.4.1/ մայրության նպաստների 4722 հոդվածից պակասեցնել 500.0 հազար դրամ, և այն հաստատել 0 դրամ:

3/ Համայնքի վարչական բյուջեի սոցիալական պաշտպանության ծախսերի նախահաշվի /խումբ 10.7.1/ այլ նպաստներ բյուջեից 4729 հոդվածին ավելացնել 1000.0 հազար դրամ, և այն հաստատել 1250.0 հազար դրամ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ				
Տողի N	Ծախսերի անվանումները	նախ. ցուցա-նիշները	նախ. կատարված փոփոխությունները	սույն նախ. հաստատվող ցուցա նիշները
10.0.0	**Սոցիալական պաշտպանություն**			
10.3.1	4726 – հուղարկավորության նպաստներ	500.0	-500.0	0
10.4.1	4726 – մայրության նպաստներ	500.0	-500.0	0
10.7.1	4729 – այլ նպաստներ բյուջեից	250.0	+1000.0	1250.0

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան
2. Կիրակոսյան Հրահատ
3. Հովհաննիսյան Գուրգեն
4. Ղարիբյան Էդիկ
5. Մելքոնյան Ձավեն

Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան